

ԵՐԵՎԱՆԻ ԷՐԵՐՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԿԵՐՆԵՐԻ ԱՍԿԱՐԻՂԱՏՆԵՐԻ ԶՎԵՐՈՎ

Հ.Զ. ՆԱՂԱՇՅԱՆ, Օ.Վ. ՇՉԵՐԲԱՎՈՎ

«Անասնաբուծության և անասնաբուծության գիտական կենտրոն» ՊՓԲԸ,
375005, Երևան

Էրեբունու համայնքի առանձին օբյեկտների հողի սանիտարաճիճվաբանական հետազոտությունները ցույց տվեցին, որ հողի ընդհանուր աղտոտվածությունը մսակերների ասկարիդատների ձվերով կազմում է 61,96%: Առավել աղտոտված է այգիների, պուրակների, սննդի և առևտրի օբյեկտների հողը: Ամենաուժեղ աղտոտվածությունը նկատվում է գարնանը և աշմանը, ամենաթույլը՝ ամռանը և ձմռանը:

Санитарно – гельминтологические исследования почвы отдельных объектов Эребунийской префектуры показали, что общая загрязненность почвы яйцами аскаридат плотоядных составляет 61,96%. В наибольшей степени загрязнены почвы парков, скверов, пищевых и торговых объектов. Наиболее сильная загрязненность почвы отмечается весной и осенью, наиболее слабая - летом и зимой.

Soil sanitary-helminthological examination in Erebuni prefecture showed, that soil common pollution degree by carnivorous ascarids eggs was 61.96 %. Maximum quantity of the eggs in soil was noticed in the parks, public gardens, trade and food objects. Pollution of soil was maximum in spring and in autumn and minimum in summer and in winter.

Հող - ձվեր - *Toxocara* - տոքսակարիս

Վերջին տարիներին մսակերների ասկարիդատների հիմնահարցը ստացել է չափազանց մեծ նշանակություն, քանի որ այս հիվանդություններով, երբեմն առավել ծանր, հիվանդանում են նաև մարդիկ:

Այսպես, Ռուսաստանի առանձին մարզերում բնակչության վարակվածությունը թրթուրային տոքսոկարոզով կազմում է 3-6% [6], իսկ Հայաստանում այդ հիվանդությունը հայտնաբերվել է գյուղաբնակների 4,12 %-ի և Երևանի բնակիչների 6,5 %-ի մոտ [5]: Երևանում մեկ ամսական շան ծագերի 83,3-91,6% վարակված են տոքսոկարոզով [1]:

Մսակերների ասկարիդատոզների հարուցիչների ձվերով հողի ուժեղ աղտոտվածության մասին հանդիպում ենք մի շարք հեղինակների աշխատություններում: Այսպես, Երևանում խաղահրապարակների և բակերի հողը 42,85%-ով աղտոտված է *Toxocara canis*-ի ձվերով, 34,61%-ով՝ պուրակների հողը, 28,44%-ով այգիների հողը [4]: Մոսկվայում մանկական հիմնարկների հողի աղտոտվածությունը *T. canis*-ի ձվերով կազմում է 11,58 % [2], Քիշնևի բակերի հողը՝ 50 %-ով, իսկ այգիների ու պուրակներինը՝ 42,9 %-ով [3], հրեական ինքնավար մարզում՝ 6-6,2% [8]:

Հաշվի առնելով վերոհիշյալը, մենք կատարել ենք Երևանի ամենամեծ և սանիտարական տեսակետից ամենաանբարեկարգ համայնքի՝ Էրեբունու առանձին օբյեկտների հողի հետազոտությունը մսակերների ասկարիդատների ձվերով աղտոտվածության վերաբերյալ:

Լյուր և մեթոդ: 2000թ. մարտից մինչև 2001թ. մարտը ներառյալ հետազոտել ենք Էրեբունու

համայնքի տարածքի զբոսայգիների, պուրակների, դպրոցների, մանկապարտեզների, բնակելի շենքերի բակերի, աղբանոցների, սննդի և առևտրի օբյեկտների հողը:

Նմուշը թխակի օգնությամբ վերցրել ենք հողի մակերեսային շերտից 100գ ընդհանուր քանակով: Այդ նմուշներից պատրաստել ենք 25-ական գրամ փորձանմուշներ, որոնք հետազոտել ենք Ռոմանենկոյի մեթոդով [7]:

Նմուշները տեղադրել ենք 250-միլիլիտրանոց բաժակների մեջ, դրանց վրա ավելացրել ջուր, այնուհետև բաժակները 5 ր տևողությամբ տեղադրել մագնիսական խառնիչի վրա: Խառնելուց հետո խոշոր մասնիկները ջրի մակերեսից հեռացրել ենք, իսկ խառնուրդը կենտրոնախուսել 3 ր 1000 պտ/ր: Վերստավածքային հեղուկը զգուշությամբ հեռացրել ենք, իսկ նստվածքին ավելացրել կերակրի աղի 1,2 գ/մլ խտությամբ իզոթեցած լուծույթ և կրկին կենտրոնախուսել նույն արագությամբ 3 ր: Այնուհետև փորձանոթները տեղադրել ենք շտատիվի վրա և նրանց վրա ավելացրել աղի հազեցած լուծույթ՝ մինչև ուռուցիկ արտափքանքի առաջացումը, որից հետո ծածկել առարկայական ապակիներով: 30 ր անց ապակիները հեռացրել ենք ու դիտել մանրադիտակի միջին խոշորացման տակ (120x):

Արդյունքներ և քննարկում: Հետազոտված հողի 184 նմուշներից մակերևների ասկարիդատների ձվերը հայտնաբերել ենք 114-ում (61,96%): *T. canis*-ի ձվեր հայտնաբերվել են 100 նմուշներում (54,05%), *T. mystax*-ի ձվեր՝ 5 նմուշում (2,70%), *Toxascaris leonina*-ի ձվեր՝ 62 նմուշում (33,51%):

Հողի նմուշների աղտոտվածության աստիճանը նմուշի 25 գ տատանվում էր 1-ից մինչև 60 ձու:

Նմուշներում հաճախ հայտնաբերել ենք նաև այլ մակաբույծ որդերի ձվեր (*Ascaris lumbricoides*, *Dipylidium caninum*, *Trichocephalus trichiurus*, *Taeniidae* fam., *Enterobius vermicularis*, *Ascaridia galli*, *Parascaris equorum*):

Հետազոտել ենք նաև հողի աղտոտվածության կախվածությունը ուսումնասիրվող օբյեկտի բնույթից, ինչպես նաև աղտոտվածության դինամիկան կախված տարվա եղանակից, քանզի նման հետազոտությունների մասին տեղեկություններ գրականությունում բացակայում են:

Կատարված հետազոտություններից պարզվեց, որ առավել էքստենսիվ աղտոտված էր համայնքի այգիների և պուրակների (77,91%), ինչպես նաև սննդի և առևտրի օբյեկտների շրջակայքի հողը (65,52%):

Հետաքրքիր է այն փաստը, որ ամենաքիչ աղտոտված է աղբանոցների շրջակայքի (33,33%) և բնակելի շենքերի բակերի հողը (31,25%): Սա կարող է բացատրվել այգիներում, ինչպես նաև սննդի և առևտրի օբյեկտների տարածքում շների և կատուների զգալի կուտակմամբ:

Հարկ է ընդգծել, որ հողի աղտոտվածության ամենաբարձր ինտենսիվությունը նկատվում է դպրոցների բակերում (4,24 ձու հողի 25 գ) և այգիներում ու պուրակներում (4,04 ձու հողի 25 գ), իսկ ամենացածրը՝ աղբանոցների շրջակայքում (0,50 ձու հողի 25 գ) և բնակելի շենքերի բակերում (0,57 ձու հողի 25 գ):

Աղտոտվածության ամենաբարձր էքստենսիվությունն և ինտենսիվությունը նկատվում է գարնանը և աշնանը (հողը աղտոտված էր 70%-ով, 25 գ միջինում 3,10-5,30 ձու), իսկ ամենացածրը՝ ամռանը (60,38%, 25 գ 2,07 ձու) և ծմռանը (44,74%, 25 գ 1,08 ձու): Այսպիսով, ծմռանը հողի աղտոտվածությունը ավելի ցածր էր, քան ամռանը: Այս փաստը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ շրանում ծմեռը մեղմ է, հունվարի միջին ջերմաստիճանը տատանվում է -3,4-ից -4,3° սահմաններում, և հետևապես, նման պայմաններում ձվերը չեն ոչնչանում: Դրանց քանակի նվազումը կարելի է բացատրել, մի կողմից, աշնանային

տեղումների մեծ քանակի հետևանքով (100մմ, կամ տարեկան նորմայի 31,65%) ձվերի արտալվացմամբ, և մյուս կողմից, կենդանիների թույլ վարակվածությամբ: Ամռանը տեղումների քանակը Երևանում շատ քիչ է (50մմ, կամ տարեկան նորմայի 15,82%), իսկ ջերմաստիճանը բարձր (հողը կարող է տաքանալ մինչև +60 - +70°): Այս պայմաններում ձվերը արագ ոչնչանում են, սակայն նրանց քանակը հողում պահպանվում է ի հաշիվ նոր աղտոտման, քանի որ ամռանը կենդանիների վարակվածությունը լինում է բավականին բարձր:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ Երևանի էրեբունու համայնքում հողի ընդհանուր աղտոտվածությունը մսակերների ասկարիդատների ձվերով համեմատաբար բարձր է, որը սակայն չի կարելի ասել բնակելի շենքերի և մանկական հիմնարկների բակերի հողի աղտոտվածության վերաբերյալ:

Այսպիսով, հողի ընդհանուր աղտոտվածությունը մսակերների ասկարիդատների ձվերով Երևանի էրեբունու համայնքում կազմում է 61,96 %, որը վկայում է քաղաքում հողի աղտոտվածության զգալի աճի մասին:

Առավել աղտոտված է համայնքի հանգստավայրերի՝ այգիների և պուրակների (77,91%), ինչպես նաև առևտրի և սննդի օբյեկտների (65,52%) հողը: Այս ցուցանիշները ահազանգում են կենդանիների և ազգաբնակչությանը այս խիստ ծանր հիվանդություններով հնարավոր վարակման վտանգի մասին:

Հողի ամենաուժեղ աղտոտվածությունը մսակերների ասկարիդների ձվերով Երևանի պայմաններում նկատվում է գարնանը և աշնանը, ամենաթույլը՝ ամռանը և ձմռանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նաղաշյան Դ.Զ., Գրիգորյան Վ.Վ. Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի գիտական աշխատություններ: Սերիա «Ամասնաբուժություն», թողարկում 1-ին: Երևան, 26-27, 1999:
2. Верета Л.Е., Мамыкова О.И. Медицинская паразитология и паразитарные болезни. 3, 19-22, 1984.
3. Гораш В.Р., Алексеева М.И. Медицинская паразитология и паразитарные болезни. 1, 77-80, 1985.
4. Давидянц В.А. Медицинская паразитология и паразитарные болезни. 3, 67-70, 1982.
5. Давидянц В.А. В кн: „Паразиты человека, животных и растений“, Ереван, стр. 50, 1997.
6. Лысенко А.Я. Медицинская паразитология и паразитарные болезни. 5, 27-31, 1988.
7. Романенко Н.А. Медицинская паразитология и паразитарные болезни. 6, 728-729, 1968.
8. Янович В.А., Брюнеткина Н.М. Медицинская паразитология и паразитарные болезни. 3, 29-30, 1999.

Поступила - 28.IX.2002